

# Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հանցագործությունների դեմ պայքարը, այդ թվում՝ կատարված հանցագործությունների բացահայտումը, մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելը ոչ միայն իրավապահ մարմինների, այլև ցանկացած հասարակության առաջնահերթ խնդիրներն են: Հանցագործությունների բացահայտման գործում անգնահատելի է դատական փորձաքննության դերը: Եթե քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի բնագավառների հատուկ գիտելիքներ, ապա նշված դեպքում անհնար է խուսափել փորձաքննություն նշանակելուց և կատարելուց: Այդ տեսակետից դատական փորձաքննությունը տարաբնույթ հանցագործությունների բացահայտման կարևոր և անհրաժեշտ նախապայմաններից մեկն է:

Որքան գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստի բնագավառ ու ոլորտ՝ նույնքան փորձաքննություն: Բնական և տեխնիկական գիտությունների նվաճումներն օրեցօր ավելի շատ են արմատավորվում քրեական դատավարությունում իրականացվող փորձաքննություններում: Մարդու գործունեության վերոհիշյալ տեսակների զարգացմանը զուգահեռ ավելանում են փորձագետների կողմից հետազոտվող օբյեկտների քանակն ու հետազոտման գիտական մեթոդները:

Փորձը ցույց է տալիս, որ փորձաքննություն նշանակելիս ոչ միայն երիտասարդ մասնագետներն, այլ նաև փորձագիտական բնագավառի հարցերում տեսականորեն լավ կողմնորոշվող աշխատակիցները գործնական հմտությունների կարիք ունեն:

Քննիչների, հետաքննության մարմնի աշխատակիցների (հետաքննիչների) որոշումներում հաճախ չեն նշվում փորձաքննություն նշանակելու հիմքերը, հարցերը ձևակերպվում են անորոշ, իսկ փորձաքննության խնդրի իրավական ձևակերպումը թողնվում է փորձագետին:

Փորձաքննության կատարման համար նյութեր նախապատրաստելու, այդ նպատակով նմուշներ ստանալու, փորձաքննություն նշանակելու ընթացքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ են տրվում բազմաթիվ և տարիներ շարունակ կրկնվող սխալներ, մասնավորապես.

- դեպքի վայրում մատնահետքեր կամ ափահետքեր են թողնվում քննիչի, հետաքննության մարմնի աշխատակցի կամ դեպքի վայրում գտնվող այլ անձանց կողմից,

- սպանության դեպքերով չեն առգրավվում տուժողի հագուստները, դիակը տեղափոխելիս միջոցներ չեն ձեռնարկվում հագուստի վրա մանրաթելերը պահպանելու ուղղությամբ և ընդհակառակը, նշված հագուստի վրա հայտնվում են հանցագործության դեպքի հետ առնչություն չունեցող անձանց (հետաքննության մարմնի աշխատակցի, սանիտարի) հագուստների մանրաթելեր: ՀՀ առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱ կազմակերպությունից դիակի հագուստն առգրավվում է ուշացումով, չի չորացվում, երբեմն այն պատվում է բորբոսներով, որը գրեթե բացառում է դրա վրա մանրաթելերի հայտնաբերման հնարավորությունը,

- խախտվում է փորձաքննությունների նշանակման հաջորդականությունը, երբ, օրինակ, մանրաթելերի դատանյութագիտական փորձաքննությունը կատարվում է այլ փորձաքննություններից հետո, կամ արմանման աննշան հետքերով ատրճանակի դատաբժշկակենսաբանական փորձաքննությունը կատարվում է դատաձգաբանական փորձաքննությունից հետո: Առաջին դեպքում կարող են իսպառ կորսվել մանրաթելերը, իսկ երկրորդ դեպքում՝ արմանման հետքերը՝ որպես հետազոտելի օբյեկտներ,

- փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ փորձագետին հարցեր առաջադրելու փոխարեն անորոշ նշվում է. «դեպքի վայրից վերցված ներկանյութի բաղադրությունը համեմատել փորձաքննությանը ներկայացված ներկանյութերի

բաղադրության հետ», «պարզել ապրանքի տեսականին, տալ դրա բնութագիրը և շուկայական արժեքը» և այլն:

Նշված սխալների պատճառով ոչ միայն նշանակվում են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություններ՝ հանգեցնելով քրեական գործերի նախաքննության ժամկետների չհիմնավորված և արհեստական ձգձգումների, այլև իրական վտանգ է ստեղծվում գործով կարևոր ապացուցները «կորցնելու» համար:

Եթե նկատի ունենանք, որ ներկայումս գոյություն չունի դատական փորձաքննությունների դասակարգման, նշանակման և կատարման խնդիրներին նվիրված համակարգված որևէ աշխատություն, ձեռնարկ կամ տեղեկատվական գրականություն, ոչ հայերեն, ոչ էլ այլ լեզուներով, ապա հանցագործությունների դեմ պայքարի գործում առկա վերը նշված դժվարություններն ու բարդությունները ակնհայտ կդառնան: Այս բացը լրացնելու մի փոքր փորձ է ներկա աշխատությունը:

Աշխատությունում ընդգրկվել են դատական փորձաքննությունների բոլոր տեսակներն ու ենթատեսակները, իսկ օրինակելի նմուշների շարքում՝ փորձի ամփոփմամբ ընտրվել ու հրապարակվել են միայն տիպիկ և պրակտիկայում հաճախակի հանդիպող փորձաքննությունները:

Փորձ է արվել միասնականացնել Հայաստանի Հանրապետության տարբեր դատական փորձագիտական կազմակերպությունների կողմից կատարվող միատեսակ և համանուն փորձաքննությունները՝ դրանք դասակարգելով ըստ տեսակների ու ենթատեսակների: Նման դասակարգումը, չնայած պայմանական բնույթ է կրում, սակայն ունի կիրառական ու գործնական մեծ նշանակություն:

Ութ մասից բաղկացած աշխատության բովանդակությունը խիստ համակարգված է՝ իրավակիրառողին առավելագույնս օգտակար լինելու նպատակով:

Առաջին մասը նվիրված է փորձաքննության նշանակման և կատարման ու հետազոտման համար նմուշներ ստանալու քննչական գործողությունների մեկնաբանմանը՝ դրանց էությանը, այդ քննչական գործողությունների իրականացման հիմքերին ու օրենսդրական կարգին, ինչպես նաև փորձաքննությունների դասակարգմանը: Հեղինակը հետազոտման համար նմուշներ ստանալը դիտում է որպես փորձաքննության իրականացմանն ուղղված օժանդակ քննչական գործողություն, ուստի առաջարկում է օրենսդրորեն այն ամրագրել որպես փորձաքննության նշանակման և կատարման քննչական գործողության անբաժան մաս: Նման տեսակետն անհիմն չէ ու բխում է այդ քննչական գործողությունների վերաբերյալ առկա օրենսդրության բարելավման շահերից:

Երկրորդ մասի կառուցվածքն ամբողջությամբ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության դատական փորձագիտական կազմակերպությունների գործունեությունում, թեև օրենսդրական կարգավորում չստացած, սակայն, գործնականում ձևավորված տարբեր դասերից, սեռերից և տեսակներից (ենթատեսակներից) բաղկացած դատական փորձաքննությունների ինդեքսավորման համակարգին:

Երրորդ, չորրորդ և հինգերորդ մասերը նվիրված են, համապատասխանաբար, համալիր, լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների կատարման օրենսդրական լուսաբանմանը:

Հետևելով փորձաքննության վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա նորմերին՝ հեղինակը վեցերորդ և յոթերորդ մասերում անդրադարձել է, համապատասխանաբար, փորձագետի հարցաքննությանը, փորձաքննություն նշանակելու և կատարելու օրինականությունն ու հիմնավորվածությունը ապահովող փաստաթղթերի կազմմանն ու այդ առթիվ պրակտիկայում հաճախ հանդիպող խնդիրներին:

Աշխատության ութերորդ մասը նվիրված է հետազոտման համար նմուշներ ստանալու կապակցությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումներին ու կազմված արձանագրություններին:

Երկրորդից մինչև ութերորդ մասերում բերված են պրակտիկայում առավել հաճախ հանդիպող փորձաքննություններ նշանակելու մասին որոշումների, հետազոտման համար նմուշներ ստանալու մասին որոշումների և արձանագրությունների, ինչպես նաև այլ դատավարական փաստաթղթերի օրինակելի նմուշներ, որոնք ծանրաբեռնված չեն և համապատասխանում են որոշումը կազմելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Օրինակելի նմուշներն ուղեկցվում են գիտագործնական մեկնաբանություններով, որոնք բխում են տեսությունից, համապատասխանում են օրենսդրության պահանջներին և խարսխված են հեղինակի՝ դատախազության քննիչի, դատախազի բազմամյա աշխատանքային փորձի վրա:

***Աշխատությունը կոչված է օգնել քննիչներին, հետաքննիչներին, դատավորներին փորձաքննության կոնկրետ տեսակը ընտրելու, փորձաքննություն նշանակելու մասին որոշման անհրաժեշտ վավերապայմանները նշելու, որոշման ներածական, նկարագրական և եզրափակիչ մասերը, որոշման ձևը, կառուցվածքն ու բովանդակությունը փաստացի և իրավաբանական տեսանկյունից շարադրելու, ինչպես նաև այս կամ այն փորձաքննությունը նշանակելիս փորձագետին (փորձագետներին) առաջադրված հարցերն ընտրելու բարդ խնդիրներում:*** Այն կարող է օգտակար լինել նաև դատախազների, փաստաբանների, դատական փորձագետների, դատավարության այլ մասնակիցների, իրավաբանական բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսների, ասպիրանտների, ուսանողների և փորձաքննության հիմնահարցերով զբաղվող այլ անձանց համար:

Անհրաժեշտ հասկացությունը կամ դատավարական փաստաթղթի օրինակելի նմուշը դյուրին գտնելու նպատակով ընթերցողին առաջարկվում է նաև այբբենական-առարկայական ուղեցույց՝ գրքի համապատասխան էջերի նշումով:

Կից հավելվածներում հրապարակվել են այնպիսի իրավական ակտեր կամ դրանց քաղվածքներ, որոնք անմիջականորեն վերաբերում են փորձաքննությունների տեսակներին, դրանց նշանակման հիմքերին, կատարման կարգին, փորձագետի կարգավիճակին, քրեական վարույթն իրականացնող մարմնի լիազորություններին և այլն:

***Այս աշխատությունն իր արդիականությունը չի կորցնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կամ ՀՀ քրեական օրենսգրքի հնարավոր փոփոխությունների դեպքում:***

Աշխատության նախապատրաստմանն աջակցելու համար հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում ՀՀ դատական փորձագիտական կազմակերպությունների աշխատակիցներին:

Հեղինակը երախտագիտությամբ կրնդունի ընթերցողների կարծիքները, դիտողություններն ու առաջարկությունները, որոնք կարելի է ուղարկել [manvelaleksanyan@yahoo.com](mailto:manvelaleksanyan@yahoo.com) էլեկտրոնային հասցեով: